« Պիթնուս պահեն, այն տունն հրամանատն
« Աստուծոյ զիւք չի մոռանեն. ասեն, թէ սպի-
« տակ Պիթնուսներն հրեշտակաց նման են.
« թէ այդպէս է՝ պարտ չէ սպիտակ Պիթ-
« նուսն զենել. թէ ոք զենէ՝ ըստակին և իւր
« ընտանեացն և իւր տղայոցն զեն հասցը-
« նէ։.. Թէ ոք որ սովորութիւն անէ Պիթ-
« նուզին միսն շատ ուտէ, մասն և մուրուսն
« թափի շուտով։ Թէ ոք փորն խոստուկ լինի՝
« Պիթնուսին միսն չորցընեն, Մաղի (գղթոր)
« և Սումաղ (աղտոր) միաչափ խառնեն
« խմցընեն ջրով, խալըսի, և խոստուկն կարէ,
« Աստուծով »։ Այս նկարագրութենէս գու-
շակուի որ Պիթնուզ վայրի հաւուկ կամ Աքլորն ըլլայ. արդէն Յոյնք այ ռամկօրէն Բիդինոս կոչեն զԱքլորն կամ զԱքաղաղն։

— Յիշեմք հոս և զՏեղեկիկ թռչունն, որ ըստ գիտնոց Թուրքաց՝ է Որի կամ Ուրուր, փռ. *Milan*, բայց Աբրահամ Արապլի յարմար ստորագրէ. « Պինտ ըռէշիտ (արդար) « թռչուն է ի մէջ թռչնոց », կ'ըսէ. ի հնուց ի վեր Արապլին կ'ընծայուի Արդար կոչումն։

Շարայարելի

ՆՈՐ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ԿՈՎԿԱՍ

Հնախօսական եւ Ազգաբանական

ՀԱՏՈՐ

ՀՈՒՆԳԱՐԱՑԻ ազնիւ կոմսն Եւգինէոս Զիչի ձանապարհորդելով դէպ ի Կովկաս և ի Կեդրոնական Ասիա, — իբր արդիւնք իւր ձանապարհորդութեան, — ի լոյս ընծայած է անցեալ տարւոյն մէջ, հնութիւններն և գաղղիերեն լեզուներով երկու ստուար հատորներ[1] (էջ 1–620), մաքուր և ընտիր տպագրութեամբ, զարդարուած 150 փորագիր զատ զատ տախտակներով (planche) և բազմաթիւ պատկերներով իւրից մէջ. որոնք կը ներկայացնեն տնական, երկրագործական և այլ պէսպէս հնախօսական առարկաներ։ Այս հրատարակութեան առաջին հատորոյն մէջ բաւական երկարօրեն և հմտօրեն գրած է հեղինակն, նախ հնութիւնական ազգի գաղթականութեան պատմութիւնը, և ի մասնաւորի նկարագրած է իւր Զիչի[2] տոհմի ցեղաբանութեան հնութիւնը։ Յետոյ նաեւ տեղեկութիւններ կու տայ ի Կովկաս և ի Կեդրոնական Ասիա բնակող ժողովրդոց ազգային պատմութեան, անոնց բարուց, սովորութիւնից և գրականութեան վերաբերեալ

1. Անցեալ տարի ազնիւ Հեղինակն այցելելով ի վանս մեր, իւր ձեռամբ նուիրեց մեր գրատան օրինակ մի այս ճոխագարդ երկհատորներու։

2. Zygi կամ Zygii աւազակաբարոյ ազգ մի յափունս Պոնտոսի և ի Կովկաս. կոչուեր են ի Յունաց Zygriani, իբր Զիւղրեանք կամ Ծիկրեանք, Ծըկրեանք, գուցէ և Ծկոյրք։